ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ. «ԶԻԿԱՏԱՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՕՐԻՆԱԿԸ

Վարագյան Ս. Ս. (Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, ՀՀՍ ֆակուլտետ, Զբոսաշրջություն, 5-րդ կուրս, Երևան, Հայաստան)

Էլ. փոստ՝ sona.varagyan@mail.ru, Հեռ.՝ +374 93 84 95 25

Գիտական ղեկավար՝ Սիմոնյան Ն. Ս., դասախոս

Ամփոփագիր: Հոդվածը ուսումնասիրում է էկոտուրիզմի զարգացման ներուժը բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ «Զիկատար» պետական արգելավայրի օրինակով: Վերլուծվում է էկոտուրիզմի դերը բնապահպանության, տեղական համայնքների զարգացման և կայուն զբոսաշրջության ձևավորման գործընթացում: Քննարկվում է էկոտուրիզմի ինտեգրման անհրաժեշտությունը զբոսաշրջության կրթական ծրագրերում՝ նպատակ ունենալով զարգացնել մասնագիտական հմտություններ և խթանել բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը:

Հիմնաբառեր: Էկոտուրիզմ, ԲՀՊՏ, Զիկատար, պետական արգելավայր, կայուն զբոսաշրջություն, բնապահպանություն, տեղական համայնքներ, էկոլոգիական կրթություն:

Հետազոտության արդիականությունը: Էկոտուրիզմը, որպես կայուն և պատասխանատու զբոսաշրջության ձև, զարգանում է աշխարհում՝ ներգրավելով զբոսաշրջիկներին, ինչպես նաև պետական և մասնավոր կազմակերպություններին: Այն միավորում է բնության պահպանության, էկոլոգիական կրթության, մշակութային ժառանգության պահպանության և համայնքային զարգացման բաղադրիչները: Հայաստանում այս գաղափարը վերջին տարիներին սկսել է ավելի լայն տարածում գտնել, բայց դեռևս չի օգտագործվել իր ամբողջ ներուժով՝ հատկապես սահմանամերձ և քիչ ճանաչված տարածքներում, ինչպիսին է Տավուշի մարզում գտնվող «Զիկատար» պետական արգելավայրը: Նման տարածքները հաճախ դուրս են մնում զբոսաշրջային քարտեզներից՝ ենթակառուցվածքային խնդիրների, տեղեկատվական պակասի և ծրագրային մոտեցման բացակայության պատճառով: «Զիկատար» արգելավայրը, սակայն, կրում է էկոտուրիզմի զարգացման և տարածաշրջանային համագործակցության ընդլայնման մեծ ներուժ:

Ուսումնասիրության **առարկան** է «Զիկատար» պետական արգելավայրը՝ որպես էկոտուրիզմի զարգացման նպատակակետ:

Ուսումնասիրության **նպատակն** է բացահայտել «Զիկատար» արգելավայրում էկոտուրիզմի զարգացման հնարավորությունները և առաջարկել լուծումներ դրա կայուն զարգացման համար:

Ուսումնասիրության խնդիրները՝

- Վերլուծել էկոտուրիզմի գաղափարը, էությունը և հիմնական սկզբունքները՝ պարզաբանելով դրա համաշխարհային զարգացման միտումները:
- Ներկայացնել բնության հատուկ պահպանվող տարածքների (այսուհետ ԲՀՊՏ) դերը ազգային և միջազգային բնապահպանական քաղաքականության և զբոսաշրջության համակարգում:
- Ուսումնասիրել միջազգային փորձը՝ էկոտուրիզմի կայուն զարգացման ու ԲՀՊՏ-ներում դրա կազմակերպման վերաբերյալ:
- Վերլուծել ՀՀ ԲՀՊՏ-ներում էկոտուրիզմի կազմակերպման հնարավորությունները՝ անդրադառնալով պետական արգելավայրերին:
- Ներկայացնել «Զիկատար» պետական արգելավայրի ընդհանուր բնութագիրը, ենթակառուցվածքները և բնական ու մշակութային ռեսուրսները:
- Բացահայտել «Զիկատար» պետական արգելավայրում էկոտուրիզմի զարգացման խոչընդոտները:

• Ներկայացնել առաջարկներ և ռազմավարական մոտեցումներ՝ «Զիկատար» արգելավայրի զբոսաշրջային կայուն զարգացման համար:

Հետազոտության մեթոդներ: Սույն աշխատանքում օգտագործվել են վերլուծության, համեմատության մեթոդներըև հարցազրույցի մեթոդները:

Մասնագիտական գրականության վերլուծություն: Էկոտուրիզմի վերաբերյալ մասնագիտական գրականության վերլուծությունը ներառում է Դ. Բ. Վևերի և Ք. Ջոնսոնի՝ 2018 թվականին իրականացված ուսումնասիրությունը, որտեղ հեղինակները քննարկում են էկոտուրիզմի ազդեցությունը տեղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Նրանք ընդգծում են, որ էկոտուրիզմը ոչ միայն խթանում է բնության պահպանությանը միտված գործողությունները, այլև նպաստում է համայնքային կայուն բալանսի ձևավորմանը՝ ստեղծելով նոր տնտեսական հնարավորություններ [9, էջ 889–906]: Վերլուծության առարկա է դարձել նաև Լ. Մ. Սմիթի՝ 2020 թվականի տեսական մոտեցումը, որը բնության հատուկ պահպանվող տարածքները դիտարկում է որպես էկոտուրիստական կենտրոններ՝ շեշտադրելով կառավարման արդյունավետ մեխանիզմների, շահառուների մասնակցության և երկարաժամկետ պլանավորման կարևորությունը [7, էջ 211-225]: Այս ուսումնասիրությունները հիմք են ստեղծում՝ Հայաստանում էկոտուրիզմի ռազմավարական զարգացման ուղիներն առավել արդյունավետ կառուցելու համար:

Էկոտուրիզմի էությունը և առանձնահատկությունները: Էկոտուրիզմը պատասխանատու ճանապարհորդություն է դեպի բնության պահպանված տարածքներ՝ միաժամանակ խթանելով շրջակա միջավայրի պահպանումը, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը և էկոլոգիական կրթությունը: Այն բնութագրվում է ցածր ազդեցությամբ ճանապարհորդությամբ, փոքր խմբերով այցելություններով, վայրի բնության ուսումնասիրությամբ և տեղական մշակույթների ու տնտեսության խթանմամբ: Էկոտուրիզմի հիմնական նպատակներն են էկոլոգիական կրթության խթանումը, բնության նկատմամբ պատասխանատվության ձևավորումը, վարքային և էթիկական նորմերի զարգացումը, ինչպես նաև մարդու ֆիզիկական ու հոգեկան վերականգնումը և լիարժեք հանգիստը բնական միջավայրում [6, էջ 20-24]:

ԲՀՊՏ-ները միջազգային համակարգերում: ԲՀՊՏ-ներն ունեն կարևոր դեր ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում՝ նպաստելով կենսաբազմազանության պահպանությանը և էկոհամակարգերի կայունության ապահովմանը: Միջազգային առումով ԲՀՊՏ-ները կարգավորվում են մի շարք կոնվենցիաներով, այդ թվում՝ Կենսաբազմազանության պահպանության կոնվենցիայով (CBD) [3], Վայրի կենդանիների և բույսերի միջազգային առևտրի կոնվենցիայով (CITES) [4], ինչպես նաև Համաշխարհային ժառանգության ցանկով (World Heritage Sites)[8], որը ներառում է բնապահպանական առումով առանձնահատուկ արժեք ունեցող տարածքներ:

Միջազգային փորձի ուսումնասիրություն: Սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են միջազգային համակարգերում ԲՀՊՏ-ների հետևյալ օրինակները.

1. **Natura 2000 (Եվրամիություն)**: ԲՀՊՏ-ների խոշորագույն ցանցը, որը ներառում է շուրջ 27,000 տարածք և նպատակ ունի պահպանել կենսաբազմազանությունը՝ միաժամանակ աջակցելով կայուն օգտագործմանը [5]:
2. **Սերենգետի ազգային պարկ (Տանզանիա)**: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության տարածք՝ վայրի բնության պահպանության և էկոտուրիզմի հաջող մոդել [9]:
3. **Թըրլիքի գետահովտային արգելոց (Չինաստան)**: CDB-ի շրջանակում հաջողված մոդել՝ կենսաբազմազանության և համայնքային մասնակցության համադրությամբ [11]:

Էկոտուրիզմի հնարավորությունները ՀՀ պետական արգելավայրերում: Հայաստանի համար էկոտուրիզմի զարգացման հեռանկարները մեծ են, հատկապես՝ ԲՀՊՏ-ների շնորհիվ: Բնական տարածքների պահպանությունն ու կայուն օգտագործումը կարող են դառնալ զարգացման հիմնաքարերը, որտեղ էկոտուրիզմը համադրում է բնության պաշտպանությունն ու տեղական համայնքների սոցիալ-տնտեսական բարեկեցությունը: Արգելավայրերն ու ազգային պարկերը մեծ պոտենցիալ ունեն ինչպես բնապահպանական

արժեքների պահպանման, այնպես էլ հասարակության տեղեկացվածության բարձրացման տեսանկյունից: Էկոտուրիզմի արդյունավետ զարգացումը, սակայն, պահանջում է հստակ պլանավորում, կայուն կառավարման ռազմավարություններ և շահառուների ակտիվ մասնակցություն: Ըստ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ ԲՀՊՏ-ները կարող են օգտագործվել գիտահետազոտական, կրթական և էկոտուրիստական նպատակներով՝ պահպանելով էկոհամակարգերի բնական վիճակը [1]: Այստեղ կարևոր է ապահովել նաև տեղական համայնքների մասնակցությունը՝ ստեղծելով տնտեսական հնարավորություններ, որոնք միաժամանակ կաջակցեն և՛ բնության պահպանությանը, և՛ համայնքների կայուն զարգացմանը:

«Զիկատար» պետական արգելավայրը՝ որպես էկոտուրիզմի զարգացման նպատակակետ: «Զիկատար» պետական արգելավայրը, որը տեղակայված է Տավուշի մարզում՝ Կողբ համայնքի վարչական տարածքում, հանդիսանում է Հայաստանի կենսաբազմազանության պահպանման կարևոր օջախներից մեկը: Այն զբաղեցնում է 150 հեկտար տարածք և ընդգրկում է արժեքավոր լեռնատափաստանային ու անտառային էկոհամակարգեր, որոնք բնակավայր են հանդիսանում մի շարք հազվագյուտ ու տեղայնացված բուսական և կենդանական տեսակների համար: Արգելավայրը գտնվում է Փոքր Կովկասի կենսագրավիչ տարածաշրջանում և կառավարվում է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից՝ պետական պահպանության հատուկ ռեժիմով [2]:

Տարածքի ներուժը էկոտուրիզմի զարգացման համար պայմանավորված է ինչպես դրա բնապահպանական առանձնահատկություններով, այնպես էլ կրթական և գիտական օգտագործման հնարավորություններով: Արգելավայրում գործում է բնապահպանական կրթության և իրազեկման կենտրոն, որի հիման վրա իրականացվում են բնապահպանական սեմինարներ, ուսանողական դաշտային դասընթացներ և էկոարշավներ: Վերջին տարիներին այստեղ անցկացվել են նաև միջազգային երիտասարդական պլեներներ ու բնապահպանական միջոցառումներ՝ ընդգրկելով տեղական և արտերկրի մասնակիցների: Այս նախաձեռնությունները նպաստում են տարածքի էկոտուրիստական ճանաչելիության բարձրացմանը և կայուն զարգացման հնարավորությունների ձևավորմանը:

Համայնքի ներգրավվածության բարձր մակարդակը, մասնավորապես Կողբի դպրոցի անտառապահ ակումբի կողմից իրականացվող ծրագրերը, թույլ են տալիս համադրել էկոտուրիզմի զարգացումը բնապահպանական կրթության հետ, ինչը համապատասխանում է ժամանակակից էկոտուրիզմի հիմնական սկզբունքներին:

Հետազոտության կազմակերպումը: Սույն հետազոտության շրջանակում իրականացվել է «Զիկատար» պետական արգելավայրում էկոտուրիզմի զարգացման նախադրյալների և խոչընդոտների բազմակողմանի ուսումնասիրություն՝ համադրելով ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային տվյալների վերլուծություն: Երկրորդային տվյալները հավաքագրվել են «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տարեկան հաշվետվություններից [2], ինչպես նաև հասանելի գիտական և պաշտոնական աղբյուրներից: Այդ աղբյուրները հնարավորություն են տվել գնահատելու տարածքի կենսաբազմազանությունը, ենթակառուցվածքային վիճակը, պահպանության ռեժիմները և կառավարման ընդհանուր վիճակը:

Առաջնային տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել է հարցազրույցների շարք՝ հայաստանյան զբոսաշրջության ոլորտում գործող տասը կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հարցազրույցները կառուցվել են այնպես, որ նպատակն էր պարզել կազմակերպությունների տեղեկացվածության մակարդակը «Զիկատար» պետական արգելավայրի վերաբերյալ, այդ ուղղությամբ տուրիստական առաջարկների առկայությունը, ինչպես նաև նրանց պատկերացումները տարածքի զարգացման և զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող գործոնների մասին:

Հարցազրույցների արդյունքները ամփոփվել են գծապատկերի միջոցով, որոնք ցույց են տալիս, որ ներկայում «Զիկատար» պետական արգելավայրը քիչ է ճանաչված տուրիստական կազմակերպությունների շրջանում՝ դրանց միայն 9%-ն է կազմակերպում այցելություններ

դեպի տարածք: Միևնույն ժամանակ, 29%-ը հետաքրքրված է նման տուրերի ձևավորմամբ՝ պայմանով, որ կլուծվեն ենթակառուցվածքային խնդիրները և բարելավվի իրազեկումը: Տվյալները նաև ցույց են տվել, որ հիմնական խոչընդոտը տեղեկատվության ու գովազդի պակասն է (59%) (Տե՛ս Գծապատկեր 1-ում):



Գծապատկեր 1. «Զիկատար» արգելավայրի ճանաչելիության վերաբերյալ տուրիստական կազմակերպությունների շրջանում իրականացված հարցազրույցների արդյքունեների ամփոփում

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ «Զիկատար» արգելավայրում էկոտուրիզմի խթանման մի շարք նպաստավոր նախադրյալներ արդեն առկա են: Տուրիստական կազմակերպությունների մի մասը (29%) հետաքրքրված է այցելություններ կազմակերպել տարածք, եթե բարելավվեն ենթակառուցվածքները և տեղեկատվական հոսքը: Տարածքի կենսաբազմազանությունն ու բնապատմական արժեքները կարևոր հիմք են էկոտուրիզմի զարգացման համար: Բացի այդ, տարածքի պաշտպանված կարգավիճակն ապահովում է կայունության հիմքը: Հիմնական խոչընդոտը՝ իրազեկման պակասը (59%), շտկվող խնդիր է, որի հաղթահարմամբ հնարավոր կլինի արդյունավետորեն օգտագործել առկա զբոսաշրջային ներուժը:

Հետազոտության արդյունքները: Հետազոտության արդյունքները փաստում են, որ «Զիկատար» պետական արգելավայրը ունի էկոտուրիզմի զարգացման ներուժ, սակայն միևնույն ժամանակ կանգնած է մի շարք համակարգային և կազմակերպչական խնդիրների առաջ: Տուրիստական կազմակերպությունների հետ հարցազրույցների արդյունքում, ինչպես նաև արգելավայրի աշխատանքային փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ իրականացվում են գիտակրթական և իրազեկման որոշ միջոցառումներ, սակայն էկոտուրիզմի համապարփակ զարգացումն ու արտաքին խոչընդոտների հաղթահարումը պահանջում են շարունակական աջակցություն և ակտիվ համագործակցություն շահագրգիռ կողմերի միջև:

Էական խոչընդոտներից է քայլարշավային ենթակառուցվածքների բացակայությունը, ինչի վերացման նպատակով առաջարկվում է նախագծել և կահավորել հինգ շրջանաձև արահետներ, այդ թվում՝ Զիկատար լեռանգագաթ տանող երթուղի: Աշխատանքները հնարավոր է իրականացնել մասնագիտացված ՀԿ-ների հետ համագործակցությամբ՝ ապահովելով միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ և էկոլոգիապես կայուն տարածք:

«Զիկատար» պետական արգելավայրի փաստաթղթային ուսումնասիրության արդունքում պարզվեց, որ ունի նաև տեսանելի գիտական ներուժ. այստեղ առկա են ուսումնահետազոտական ենթակառուցվածքներ, որոնք կարելի է օգտագործել միջազգային գիտաժողովների, սեմինարների և գիտափորձնական ծրագրերի անցկացման համար՝ բարձրացնելով տարածքի ճանաչելիությունն ու գրավչությունը:

Հետազոտության արդյունքներից պարզ է դառնում համայնքային մասնակցության կարևորությունը: Կողբ համայնքը կարող է դառնալ արգելավայրի ակտիվ գործընկերը՝ զարգացնելով գյուղական զբոսաշրջությունը: Միաժամանակ, անհրաժեշտ է տեսանելիության բարձրացում մեդիայում՝ Զիկատարը որպես էկոտուրիստական ուղղություն ներկայացնելու նպատակով:

Այս բոլոր միջոցառումների իրագործումը կնպաստի տարածքի կայուն զբոսաշրջային զարգացմանը և միջհամայնքային ու միջգերատեսչական արդյունավետ համագործակցության հաստատմանը:

Սպառնալիքներ և մարտահրավերներ: «Զիկատար» արգելավայրի էկոտուրիզմի զարգացման հիմնական սպառնալիքներն են ֆինանսավորման սահմանափակ հնարավորությունները, ենթակառուցվածքների անբավարարությունը և մասնագիտական կադրերի պակասը: Մարտահրավեր են նաև բնության պահպանության և զբոսաշրջության շահերի հավասարակշռումը, տեղական համագործակցության թույլ մակարդակը և իրազեկման պակասը՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային հարթակներում:

Եզրակացություն: «Զիկատար» պետական արգելավայրը, իր կենսաբազմազանությամբ, բնաշխարհագրական և մշակութային արժեքներով, ունի էկոտուրիզմի զարգացման մեծ ներուժ՝ դառնալով ոչ միայն զբոսաշրջային, այլև գիտակրթական և համայնքային զարգացման կենտրոն: Ուսումնասիրությունները ցույց տվեցին ինչպես հնարավորությունները (քայլարշավային արահետներ, տեղեկատվական ենթակառուցվածքներ, կրթական տուրեր, գյուղական զբոսաշրջություն և տեղական արտադրանքի իրացում), այնպես էլ խոչընդոտները (ճանապարհների անբավարար վիճակ, ենթակառուցվածքների սակավություն, սահմանային անվտանգային խնդիրներ, ֆինանսավորման պակաս և համայնքի ցածր ներգրավվածություն): Զարգացումը պետք է հիմնված լինի բնության պահպանության, համայնքի մասնակցության և կայուն զարգացման սկզբունքների վրա՝ ապահովելով մրցունակ և երկարատև էկոտուրիստական ուղղության ձևավորում:

Գրականություն

1. Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք, 2006, նոյեմբերի 27, https://www.arlis.am/documentview.aspx?docid=29624 (10.04.2025)
2. Շրջակա միջավայրի նախախարության պաշտոնական կայք, http://env.am/naxararutyun/organization (10.04.2025)
3. Convention on Biological Diversity (CBD) web` https://www.cbd.int (12.04.2025)
4. Convention on International Trade in Endangered Species of Wild Fauna and Flora, web` https://cites.org/eng (13.04.2025)
5. European Commission. (2023). Natura 2000 overview. European Union. Retrieved from https://environment.ec.europa.eu/topics/nature-and-biodiversity/natura-2000_en (15.04.2025)
6. Honey, M. (2019). *Ecotourism and Sustainable Development: Who Owns Paradise?* (2nd ed.). Island Press.20-24
7. Smith, L. M. (2020). Ecotourism planning and protected areas: The role of participatory governance. *Journal of Ecotourism, 19*(3), 211–225.
8. UNESCO World Heritage Centrehttps: https://whc.unesco.org/en/list/ (17.04.2025)
9. Serengeti National Park. United Nations Educational, Scientific and Cultural Organization. Retrieved from https://whc.unesco.org/en/list/156 (17.04.2025)
10. Weaver, D. B., & Johnson, C. (2018). Community-based ecotourism and sustainable development: A synthesis of best practices. *Journal of Sustainable Tourism, 26*(6), 889–906.
11. Convention of Biological Diversity, China's protected areas https://www.cbd.int/countries/profile?country=cn (18.04.2025)

ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ ЭКОТУРИЗМА В ОСОБО ОХРАНЯЕМЫХ ПРИРОДНЫХ ТЕРРИТОРИЯХ: НА ПРИМЕРЕ ГОСУДАРСТВЕННОГО ЗАПОВЕДНИКА «ЗИКАТАР

Варагян С., С. (Государственный университет имени В. Брюсова, Факультет социальных коммуникаций и сервиса, специальность «Туризм», 5 курс, Ереван, Армения)

Аннотация: В статье рассматриваются перспективы развития экотуризма на особо охраняемых природных территориях на примере государственного заповедника «Зикатар». Анализируется роль экотуризма в охране природы, развитии местных сообществ и формировании устойчивого туризма. Обсуждается необходимость интеграции экотуризма в образовательные программы по туризму с целью развития профессиональных навыков и формирования ответственного отношения к окружающей среде.

Ключевые слова: Экотуризм, ООПТ, Зикатар, государственный заповедник, устойчивый туризм, охрана природы, местные сообщества, экологическое образование.

OPPORTUNITIES FOR ECOTOURISM DEVELOPMENT IN PROTECTED AREAS: THE CASE STUDY OF ZIKATAR STATE RESERVE

Varagyan S. S. (V. Brusov State University, The Faculty of Public Communication and Service, Tourism Department, 5th Year, Yerevan, Armenia)

Abstract: The article explores the potential for ecotourism development in protected natural areas, using the Zikatar State Reserve as a case study. It analyzes the role of ecotourism in environmental protection, local community development, and the promotion of sustainable tourism. The paper also discusses the necessity of integrating ecotourism into tourism education programs to enhance professional skills and foster a responsible attitude toward nature.

Keywords: Ecotourism, Protected Areas, Zikatar, State Reserve, Sustainable Tourism, Environmental Protection, Local Communities, Environmental Education.